Հայտարարություն

Սոցիալական Պաշտպանության Վարչարարության Երկրորդ Ծրագիր

No: 5398-AM

ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» պետական հիմնարկը հայտնում է, որ Համաշխարհային բանկի «**Սոցիալական Պաշտպանության Վարչարարության երկրորդ ծրագիր»** վարկային ծրագրի շրջանակում՝ **ՀՄԾՏԿ-ների և ԱՍՀՆ-ի աշխատակազմի գրասենյակների կահավորման ինտերիեր-դիզայներական նախագծերի, անհրաժեշտ ապրանքների մասնագրերի և նախահաշիվների պատրաստման ու այդ ապրանքների մատակարարումների նկատմամբ տեխնիկական հսկողության իրականացման** առաջադրանքները իրականացնելու նպատակով հայտարարվում է խորհրդատվական ընկերությանների ընտրության մրցույթ:

Այս առաջադրանքի նպատակն է համապատասխան փորձառությամբ խորհրդատվական կազմակերպություն ընտրելու միջոցով, իրականացնել Համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների, ինչպես նաև ԱՍՀՆ-ի աշխատակազմի մի քանի գրասենյակների **ինտերիեր-դիզայներական (3D) նախագծերի, կահավորման միջոցների մասնագրերի և նախահաշիվների պատրաստումն ու ապրանքների մատակարարումների նկատմամբ տեխնիկական հսկողության իրականացումը**:

Խորհրդատվական կազմակերպության հիմնական գործունեությունը կայանալու է հետևյալում՝

ա) ուսումնասիրել սույն տեխնիկական հանձնարարականով նախատեսված օբյեկտների շինարարական նախագծերն ու օբյեկտների փաստացի պայմաններն ու մշակել այդ օբյեկտների ներքին ինտերիեր-դիզայներական նախագծերը, կահավորման համար անհրաժեշտ ապրանքների ցանկը, մասնագրերն ու նախահաշիվները՝ ներկայացնելով հաշվարկների բացվածքներն ու ապրանքների արժեքները հավաստող շուկայական գների հիմնավորումները,

բ) ապահովել նախագծերի, նախահաշիվների և մասնագրերի մշակումը՝ Պատվիրատուի ներկայացրած պահանջներին համապատասխան,

գ) մատակարարող կազմակերպությունների կողմից՝ ապրանքների մատակարարումների ընթացքում, իրականացնել տեխնիկական հսկողություն՝ ապահովելով ընդունվող ապրանքների համապատասխանությունը ապրանքների մասնագրերին, նախագծերին ու մատակարարման պայմանագրով նախատեսված այլ տեխնիկական պահանջներին:

Խորհրդատուն, կամ նրա մասնագիտական աշխատանք կատարող աշխատակազմի անդամները պետք է ունենան՝

- ✓ հասարակական շենքերի ներքին ինտերիեր-դիզայներական նախագծերի, ապրանքների մասնագրերի և նախահաշիվների պատրաստման առնվազն 5 տարվա փորձ.
- ✓ վերջին 5 տարիների ընթացքում առնվազն 3 հաջող իրականացված նմանատիպ աշխատանքներ,

- ✓ աշխատանքներն իրականացնելու համար անհրաժեշտ որակյալ մասնագիտական աշխատակազմ, որում պետք է առնվազն ընդգրկված լինեն թիմի ղեկավար, ճարտարապետ, կոնստրուկտոր/շինարար, կահույքագործ-տեխնոլոգ, համակարգչային ինտերիեր-դիզայնի մասնագետ, նախահաշվորդ:

Վերը շարադրված պահանջներին համապատասխանող խորհրդատվական ընկերությունները կարող են մեկ կամ ավել առաջադրանքների համար մինչեւ **սույն թվականի հուլիսի 15-ը** ներկայացնել հետաքրքրվածության հայտեր անհրաժեշտ տեղեկություններով (ընկերության վերաբերյալ համառոտ տեղեկատվություն՝ ընդհանուր աշխատանքային փորձի, այդ թվում վերջին տարիներին նմանատիպ հանձնարարականների իրականացման փորձի, վերընշված պահանջներին բավարարող անձնակազմի առկայության վերաբերյալ, աշխատակազմի կենսագրական թերթիկները եւ այլն) ստորեւ նշված հասցեով:

Հետաքրքրվածության հայտերը կարող են ներկայացվել նաեւ էլեկտրոնային փոստով:

ՀՀ Ֆինանսների նախարարության
«Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն պետական
հիմնարկի գործադիր տնօրեն՝ Է. Ավետյանին
Երեւան 0010, Տիգրան Մեծի փողոց 4
Հեռախոս. (374 11) 910581
Էլ. փոստ. info@ffpmc.am